

Կոչ Ֆրանսական Մեծն Արևելքի Ազատ Որմնադրաց Ուղղեալ Յամայն Աշխարհի

Մեծն Արևելքի Ազատ Որմնադրած Ֆրանսական Կազմը, հանդիսական կոչով, խղճի գիտակցութիւնը արթնցնելու կը հրաւիրէ, աշխարհքի բոլոր ազգերը:

Նախատեսմելի է որ, Միջազգային Պատժական Ատեանը, երբէք չ'պիտի կարողանայ արգելք հանդիսանալ, ցեղասպանութեան ոճրի և կամ մարդկութեան դէմ ոճրի գործադրութեան:

Բայց, համարելով որ, համաշխարային արդարագործութիւնը երբ ի գործ կը դնենք, վճռական քայլով մը կը յառաջանանք դէպի մոլորակային « Միասնապրութեան » գաղափարին. քանզի ժողովրդավար աշխարհ մը կարող է պաշտօնավարել, երբ միայն՝ դատաւորական, օրէնսդրական և գործադրական իշխանութիւնները, իսկապէս իրարմէ անչատ կերպով կաշխատին:

Մեծ Արևելքի Ֆրանսական Կազմը, այս կոչը արձակելով, կուզէ կարելիութիւնը ստեղծել, տիեզերական ամփոփ դատաստանական ատեանի մը իրագործման, որ կը կարողանայ արաջնորդել միայն Աշխարհքի կազմակերպութեան մը ուր, ամէն կին և մարդ նոյն իրաւունքներու կը տիրանան:

Ֆրանսական Մեծն Արևելքի Կազմը կոչ կ'ուղղէ, գործադրական դարձնել Միջազգային Պատժական Ատեանը, ժամանակի և տարածանքի մէջ ...

- 1 Ներմուծել, օրէնքի տիրապետութեան կերպ մը, համաշխարհային յատկանիշով, ըմբռնելի ամէն մարդու կողմէ, վասն զի, բոլոր մարդկութիւնը ամէն մէկ անձի մէջն է:
- 2 Զօրացնելով անկապտելիութեան իրաւունքը այս ոճիրներուն, ջնջելով բացառութիւնը որ հնարաւոր կը դարձնէ յետագղեցիկութեան օրէնքէ փախուստ տալը:
- 3 ՄԱԿ ի Ապահովութեան գործադիր խորհուրդի իշխանութենէն վերցնել, հետապնդումը ընդհատելու կարելիութիւնը, ցեղասպանութեան կամ մարդկութեան դէմ եղեոնագործութեան յանցանքի հեղինակներուն:
- 4 Հրաւիրելով միջազգային համայնքը. Ամերիկայի Միացեալ Նահանգները, Հնդկաստանը, Չինաստանը, Իսրայէլը միասնաբար վաւերացնել Հոռմի Սահմանադրութիւնը, պաշտօնի կարգելով Միջազգային Պատժական Ատեանը:

Այսպէս, միջազգային օրէնքը կը տիրապետէ. որուն միջոցաւ անհատին իրաւունքը կը ճանչցուի և կ'ամրանայ երկիրներու իշխանութիւններու դէմ և վերջապէս կը կիրարկուի:

Այսպէս, կը վերջանայ եղեոնագործերու անպատժութիւնը և իրենց դատապարտութեան ծանուցումը կարելի կը դառնայ:

Այսպէս, տիեզերական արդարութիւնը վերջապէս իրագործելի կը դառնայ:

Այսպէս, ընդհանուր զոհերուն յիշատակը վերջապէս յարգանքի և պատիւի կարժանանայ:

Այսպէս, առաջին անգամ ըլլալով Մարդկանց Դէմ Ոճիրով զոհուածներու յիշատակը չի նշանակէր միայն « յիշողութեան պարտականութիւն » այլ վերջապէս կը ստանայ իր բովանդակ նշանակութիւնը:

Բարիզ 21 Մայիս 2006

Աւագ Վարպետ

Մեծն Արևելքի Ֆրանսական Կազմի

Ժան Միշել Գիլարտէ